

«ՀԱՆԴԷՍ ԲԱՆԱՍՏԵՂԾԱՅ» ԽՈՐԱԳՐՈՎ ՁԵՌԱԳԻՐ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՎԿԱՅՈՒՈՂ ԲԱՌԻՄԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(ԺԲ.-ԺԷ. ԴԱՐԵՐ)

Նագիկ Յովհաննիսեան

Ներածություն

Նոր հայկազեան բառգրքի մի շարք բառայօգուածներում առկայ են կամ դրանք աւարտւում են «բառ Հին բռ. որպէս փաղանուն դնի», «գտանի ի Հին բռ. ի կարգի փաղանունաց այսպէս», «իրրու փաղանունաց դնին ի Հին բռ.», «...ի Հին բռ. որպէս փաղանուն գրին/դնին/դնի», «...ի Հին բռ. ի կարգի փաղանունաց դնին...» «...զի որպէս փաղանուն գրին ի Հին բռ.» նշումներով¹: Դրանք հաւաստում են, որ Մխիթարեան միաբանները ծանօթ են եղել հոմանիշներին՝ «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններին, որոնք, ըստ Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրացոյցակների², աւանդուած են ԺԲ.-ԺԷ դարերից: Յատկանշական է, որ բառգիրքն աշխատասիրած միաբանները «Հին բռ.» համառօտագրութեամբ արձանագրում են. «Հաւաքումն բառից ի գրչագիր համառօտ բառագիրս. գործ ժգ եւ ժդ դարուց՝ ի գիտնց եւ ի տգիտաց կցկցեալ, ի պէսպէս օրինակս այլեայլ օրինակաւ» (ՆՀԲ, հտ. I, էջ 14. ընդգծ.՝ Ն.Յ.): Եւ իրօք, այս ձեռագիր բառարաններում (այսուհետեւ՝ ՁԲ) վկայւում են բառեր, որոնց առկայութիւնը հոմանիշների համապատասխան

բառաշարքերում արդէ տեսանկիւնից չփոթեցնող է. «Հանդէս բանաստեղծաց» խորագրով ՁԲ-ներում բառիմաստները դանազանելու խնդիրը բաւական բարդ է, քանի որ դրանք հունեն բնագրային օրինակներ: Հ. Ամալեանի վկայութեամբ. ««Հանդէս բանաստեղծաց»-ի հոմանիշները հիմնականում գրական լեզուի բառեր են. այն էլ մասամբ քիչ գործածական ու գրքային բառեր, որոնք հանդիպում են կրօնական, ճարտասանական, ներբողական եւ այլ գրական երկերում»³: Այդուհանդերձ, բառարանային դիտարկումներն ու պրպտումները հնարաւորութիւն են ընձեռում պարզաբանելու, հիմնաւորելու այդ բառերի գոյութիւնը հոմանիշների համապատասխան բառաշարքերում, այլեւ ներկայացնելու դրանց իմաստային փոփոխութիւնները: Հարկ է նշել, որ այս դէպքերում օգնում են յատկապէս գրաբարի տպագիր բառարանները՝ բնագրային օրինակներով, վկայութիւններով, յղումներով:

Եւ ուրեմն կարելի է քաղել օրինակներ՝ սկսելով վաղ շրջանում կազմուած կամ

1 Տե՛ս, օրինակ, Համդգել, Ձեռնածու, Յախոնդախաւ, Օրինանք, Օոճք, Ուղփաճեմ, Վառնիկ, Յուց, Փէշաոր բառայօդուածները. համապատասխանաբար՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատուր Սիրմելեան, Հ. Մկրտչի Աւգերեան (այսուհետեւ՝ ՆՀԲ), Վեմետիկ, հտ. II, 1837, էջք 29, 152, 314, 479, 489, 532, 548-549, 785, 917, 939-940: (Աշխատութիւնների եւ բառարանների խորագրերը տրուում են

ըստ տիտղոսաթերթերի՝ պահպանելով ուղղագրութիւնը):

2 Յուցակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա.-Բ, Եր., 1965-1970: Հմմտ. Գաե՛ւ Հ. Ամալեան, Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները (V-XV դդ.), Եր., 1966, էջ 233-234:

3 Հ. Ամալեան, Հայ միջնադարեան բառարանագրութիւնը, Եր., 2007, էջ 110-111:

ընդօրինակում⁴ գրչագրերից: Նախ առանձնացրում են Մեսրոպ Մաշտոցի առանձնադարանի ձեռագրերից (այսուհետև՝ ՄՄ), ըստ ձեռագրացուցակների, ԺԲ.-ԺԳ. դարերից առանդում ՄՄ թիվ 5596 ձեռագրում վկայուող բառերը:

Բառիմաստների քննություն

Ռեստոր. տելետի. վարժապետ. փիլիսոփայ. իմաստասեր. ամենիմաստ հոմանիշների բառաշարքում⁵ (այսուհետև՝ ՀԲՇ) առանձնանում է իմաստակ⁶ բառը (217բ)⁷: Ստ. Մալխասեանցի հաւաստմամբ՝ սկզբնապէս նշանակելով «փիլիսոփայ-հոստոր, որ վարժով սովորեցնում էր հոստորութիւն եւ փիլիսոփայական գիտելիքներ. սովեաստէս»՝ այժմ իմաստակ-ը «խարզախ

ապացոյցների միջոցով ու լեզուի ճարտարութեամբ ամեն ինչ ե՛ւ հերքում է ե՛ւ ապացուցում», «թերուս. երեւակայող» անձն է⁸: Եւ բնականաբար արդի հայերէնի բառարաններում իմաստակ-ը բացատրւում է որպէս «իմաստակութեան վրայ հիմնուած դատողութիւններ անող», «ճարտարամտութեամբ յայտնապէս սխալ դրոյթները որպէս ճշմարիտ ներկայացնող», այլեւ «թերուս՝ տգէտ, բայց իրեն իբրեւ գիտուն ներկայացնող մարդ»⁹, «ինքնզինքը խելացի կարծող, կեղծ ճարտարաբան, կեղծ իմաստուն»¹⁰: Ինչ վերաբերում է իմաստակի արդի հայերէնում կիրառուող իմաստին, ապա հետաքրքրական է Մ. Աբեղեանի՝ գրաբար-աշխարհաբար նոյնանիշներին առնչուող դիտարկումը. «...բուն աշխարհաբար բառերն ունեն աւելի ընդարձակ

4 Ըստ Հ. Ամալեանի՝ «Հանդէս բանաստեղծաց»-ը հնագոյն բառարաններից է. «...այն վկայում է XII դարից: Բառարանի նախագաղափար օրինակը չի պահպանուել. գրութեան ստոյգ ծամանակը, տեղը եւ հեղինակը անյայտ են» (Հ. Ամալեան, *Միջնադարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները*, էջ 124): Բայց հետագայում, հետեւելով Գ. Գասպարեանին եւ ընդունելով նրա դիտարկումը, որ «Բառարանի հնութիւնը ... հասնում է XII դարը, բայց վերաբերում է ավելի վաղ շրջանի» (Գ. Գասպարեան, *Հայ բառարանագրութեան պատմութիւն*, Եր., 1968, էջ 34), Հ. Ամալեանը «Հայ միջնադարեան բառարանագրութիւնը» աշխատութեան մէջ արդէն նշում է՝ «Իսկական, բառարանագրական մասնագիտական առումով, հոմանիշների բառարանը հայ մատենագրութեան մէջ «Հանդէս բանաստեղծաց» անունով յայտնի բառարանն է, որի հնագոյն ձեռագիրը XII դ. ընդօրինակութիւն է» (Հ. Ամալեան, *Հայ միջնադարեան բառարանագրութիւնը*, էջ 47) (ընդգծ.՝ Ն. Հ.), այլեւ արձանագրում, որ բառարանը «կազմված է 10-11-րդ դարերում» (Հ. Ամալեան, նշ. աշխ., էջ 356): Հարկ է նաեւ յիշատակել լեզուաբանների այն մօտեցումը, որ թէեւ «...միջին հայերէնի իմաստափոխութիւնները տեղի են ունեցել յատկապէս 12-16-րդ դարերում, սակայն պէտք է ընդունել, որ այս իմաստափոխութիւններից շատերն աւելի վաղ շրջանի արդիւնք են: Դրանք գոյութիւն են ունեցել ժամանակի ժողովրդախօսակցական լեզուում եւ ուղղակիօրէն անցել են գրական լեզուին յիշեալ

դարերի ընթացքում». Ռ. Ղազարեան, *Լեզուաբանական ուսումնասիրութիւններ*, Եր., 2010, էջ 187:

5 Պահպանում է ՋԲ-ների ուղղագրութիւնը:

6 *Իմաստակ*-ը դասական հայերէնում դիտւում է յունաբանութիւն՝ «հայերէնի բառակազմական կաղապարների տեսանկիւնից նորարարական կազմութիւն», որ ցոյց է տալիս «բայական հիմքից կազմուած գործող անձի անուն». տե՛ս Գ. Մուրադեան, *Յունաբանութիւնները դասական հայերէնում*, Եր., 2010, էջ 77:

7 Բառերը ներկայացւում են ոչ թէ այբբենական կարգով, այլ ըստ ՋԲ-ում յիշատակուելու էջերի:

8 Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետեւ՝ ՄՀԲԲ), հտ. II, Եր., 1944, էջ 175:

9 *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան* (այսուհետեւ՝ ԺՀԲԲ), հտ. II, Եր., 1972, էջ 305: Է. Աղայեան, *Արդի հայերէնի բացատրական բառարան* (այսուհետեւ՝ ԱՀԲԲ), Եր., 1976, էջ 487:

10 Ծիգմեճեան Պետրոս վրդ., *Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, հտ. I, Հալէպ, 1954, էջ 366: «Հայոց լեզուի նոր բառարան», Աշխատասիրեցին՝ Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տօնիկեան, Պէյրութ, 1968, էջ 25: «Հայոց լեզուի նոր բառարան», Աշխատասիրեցին՝ Գ. Ծիգմեճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, հտ. I, Պէյրութ, 1992, էջ 145: Ա. Կոսեան, *Բառգիրք գործնական հայերէնի*, Պէյրութ, 1998, էջ 151:

նշանակութիւն, մինչդեռ գրաբարից առնուածները գործածուում են սահմանափակ, աւելի բարոյական իմաստով»¹¹:

Ստ. Մալխասեանցի «սկզբնապէս» վկայած իմաստը մասնակիօրէն հաստատուում է եր. Մեղրեցին՝ իմաստակ-ը մեկնելով «փաղաքշական. փոքր իմաստուն», բայց եւ «ձեւով իմաստուն կերպարանեալ»¹²: Մխիթար Սեբաստացին, արձանադրելով «կերպարանեալ իմաստուն. կամ ձեւով միայն իմաստուն... կամ ճարտարախօսութեամբ զինքն իմաստուն երեւեցուցանէ. բայց ի ճշմարտութենէ նորա է թափուր» նշանակութիւնը, յաւելում է. «Իսկ մերթ նշանակէ զիմաստասէրն. կամ զիմաստունն. եւ այս ասէ զարտաքին փիլիսոփայից»՝ յղելով Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկի («Նարեկ. ծէ եւ դէ»)՝¹³ «Քանզի եւ որպէս իմաստակի ու մեմն արտաքնոյ Բարուք թուեցաւ չար ասել զմահ առ չիմանալոյն պատճառի...» նախադասութիւնը¹⁴ (ընդդ.՝ Ն. Յ.): Որպէս իմաստակ-ի բնագործի օրինակ՝ այս նախադասութիւնն արձանադրուում է նաեւ ՆՀԲ-ն¹⁵: Նարեկացիագէտների կարծիքով՝ «Նարեկացին ակնարկում է եղիշէի՝ ոմն

Հին իմաստաւերից բերած այս արտայայտութիւնը. «Որպէս եւ ասաց ոմն ի Հնումն. մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, որ¹⁶ երկնչի ի նմանէ»¹⁷: Այն վերագրուել է Պատմին, իմաստասէր, աստղաբան Հերմէս Եռամեծին¹⁸: Հետեւաբար Գրիգոր Նարեկացու ակնարկած իմաստակ-ը չէր կարող նշանակել «ձեւով իմաստուն կերպարանեալ», այլ միայն «զիմաստասէրն. կամ զիմաստունն»: Եւ հայ մատենագրութեան մէջ առկայ հէնց այս իմաստով գործածուելով է ներառուել գրչագրում:

Մանրամասն բառը յիշատակում է Բոպէ. քթթելակաւն¹⁹. Ժամ. մասն ինչ. տարեր նուրը ՀԲԾ-ում (217բ-218ա): Ըստ ՆՀԲ-ի՝ «Մանր եւ մանրագոյն մասն՝ ժամանակի եւ իրաց» իմաստը վկայւում է է. դարից (Հտ. II, էջ 208: տե՛ս նաեւ՝ ԱԲ, էջ 540): Մխիթար Սեբաստացու բացատրութիւնն է. «Մանրամասն ... ունիզ զմանր, եւ զնուրը մասունս. կամ ի մանր մասունս փշրեցեալ, եւ անջատեցեալ: Իսկ մերթ ասի զքննութեանց, կամ զպատմութեանց, որով իւրաքանչիւր մասունք, կամ որպիսութիւնք իրին մանր մանր քնին. կամ յայտնին. եւ յայնժամ նշանակէ

11 Մ. Աբեղեան, Երկեր, Զ, Հայոց լեզուի տեսութիւն, Եր., 1974, էջ 131-132:

12 Տե՛ս նաեւ՝ «Բառգիրք հայոց» (այսուհետեւ՝ ԲՀ), ՔԱՅԱԿԱՆ քննագիրը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Հ. Մ. Ամալեանի, Եր., 1975, էջ 129:

13 Բառգիրք հայկազեան լեզուի բաժանէալ լեզուիս հատորս արարեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացու (այսուհետեւ՝ ԲՀԼ), ՎԷՆԵՏԻԿ, 1749, էջ 335: Տե՛ս նաեւ՝ «Բառգիրք հայկազեան լեզուի», հտ. II, Արարեալ ... յաշակերտաց ... Մխիթարայ մեծի աբբայի (այսուհետեւ՝ ԲՀԼՄՍ), ՎԷՆԵՏԻԿ, 1769, էջք 153, 201: Մ. Զախչախեանը նույնպէս արձանագրում է «միտս իմաստութեան եւ գրոց, իմաստուն: իմաստաւեր փիլիսոփայ՝ ճշմանկութիւնը («Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Յօրինեալ ի Հ. Մանուէլ վարդապետէ Զախչախեան» (այսուհետեւ՝ ԶԲ), ՎԷՆԵՏԻԿ, 1837, էջ 600), իսկ ահա Առձեռն բառարանը՝ վկայում որպէս «գիցքը իմաստուն կարծող կամ

սեպուած, անուրը ելած, ճարտասան» («Առձեռն բառարան հայկազեան լեզուի» (այսուհետեւ՝ ԱԲ), ՎԷՆԵՏԻԿ, 1865, էջ 339):

14 Ս. Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան եւ այլ երկասիրութիւնք, Անթիլիաս, 2003, էջ 241:

15 ՆՀԲ, հտ. I, ՎԷՆԵՏԻԿ, 1836, էջ 847:

16 Վրիպակ է. պէտք է լինի՝ ոչ:

17 Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, Աշխատասիրութեամբ Պ.Մ.Խաչատրեանի եւ Ա. Ա. Ղազիսեանի, Եր., 1985, էջ 1063-1064: Մանրամասն տե՛ս նաեւ Յ. Մանանդեան, Հերմէայ Եռամեծի առ Ասկղեպիոս սահմանը, «Բանբեր Մատենադարանի», 3, 1956, էջ 293:

18 Տե՛ս նոյն տեղերում:

19 Բթթելակաւնը սխալագրութիւն է. բառարաններում վկայում է քթթել ակաւնը՝ «թարթել աչաց», «ակնթարթ», «վայրկեան» (ՆՀԲ, հտ. II, էջ 1005: ԱԲ, էջ 834: ՄՀԲԲ, հտ. IV, էջ 572):

զմանրամասնական»։ Նա բառալոգում էր եզրափակում է ժԲ. դ. մատենագիր Ն. Լամբրոնացուն յղումով (ԲՀԼ, էջ 615-616)։ «Մանր եւ մանրագոյն մասն ժամանակին, վայրկեան» նշանակութիւնը յիշատակում են Մ. Զախարյանը (ԶԲ, էջ 948), Ստ. Մալխասեանը՝ որպէս «Հին նշանակութիւն» (ՄՀԲԲ, հտ. III, էջ 256)։

Հ. Աճառեանի հաւաստմամբ՝ «վկայութիւնը անյայտ» մասն-ի «վայրկեան» իմաստն առկայ է ԱԲ-ում (ԱԲ-ում առկայ է նաեւ «բոպէ»-ն, էջ 541)։ Նա նկատում է. «... այս նշանակութեան համար վկայութիւն ունինք Վանակ. տարեմ. «Զի տայ կամ կրէ գիշերն յորէն զժամն եւ զմասունքն» (տե՛ս ՆՀԲ տրէ բառի տակ)։ Բառիս այս նշանակութիւնը անվաւեր պիտի համարէինք, եթէ չլինէր վրաց. Յանո մասի «15 վայրկեանի ժամանակամիջոց» (ՀԱԲ, հ. Գ., էջ 264)։ Հարկ է նշել, որ Վանական Վարդապետ Տավուշեցիի ժԳ. դ. մատենագիր է։ Եւ եթէ, ինչպէս արդէն նշուել է, լեզուաբանների հաւաստմամբ՝ «Հանդէս բանաստեղծաց»-ի «Հնագոյն ձեռագիրը XII դ. ընդօրինակութիւն է», «կազմուած է 10-11-րդ դարերում», ապա կարելի է փաստել, որ ԶԲ-ում բառի աւելի վաղ վկայութիւն է։

Յատկանշական է, որ արդի հայերէնի բացատրական բառարաններում արձանագրուող «Բոլոր մասերը լրիւ պարունակող, լիակատար, անթերի», «Բոլոր մասերը լրիւ քննուած, մանրակրկիտ, մանրագնին», «Մանրամասն» իմաստները (ԺՀԼԲԲ, հտ. III, էջ 478։ ԱՀԲԲ, էջ 967)²⁰, ըստ ՆՀԲ-ի, առկայ են ժԳ դ. մատենագիրներ Գ. Սկեռացու եւ Յովհ. Երզնկացու երկերում (հտ. II, էջ 208)։

Վաղվաղակի. փութանակի. ճեպով. առժամայն. գործառոտ. շտապով. տագնապով.

շեշտակի ՀԲԾ-ն (219բ) ամփոփում է առձեռն պատրաստ յարադրական կազմութիւնը։ Եր. Մեղրեցիին վկայում է միայն «ձեռն ի ձեռն, կամ պատրաստ» իմաստով առձեռն-ը (ԲՀ, էջ 32)։ Մխիթար Սեբաստացին յարադրական կազմութեան համար նշում է, որ այն «...մերթ նշանակէ՝ վաղվաղակի, կամ իսկոյն» (ԲՀԼ, 90-119), «իսկ մերթ՝ անդէն վաղվաղակի. կամ փութանակի. եւ կամ ճեպով»՝ յղելով Հին պատմագիրների երկերը («...ըստ այնմ ի Հին պատմագիրս։ Եւ առձեռն պատրաստ զհայցուածն կատարել։ կամ որք առձեռն պատրաստ եկեալ հասեալ որջացեալ էին, այսինքն անդէն վաղվաղակի»), այլեւ մանրամասնելով, որ ասուածը վերաբերում է նաեւ Մ. Խորենացուն. «... ուր ասի զսրբոյն Մեսրոպայ. Ստեղծ զնշանագիրս մեր, կերպածեալ զգիրն առձեռն պատրաստ, այսինքն ձեւացուցեալ զգիրն փութանակի» (ԲՀԼՄՍ, 60)։

Հարկ է թերեւս նշել, որ «վաղվաղակի, իսկոյն, անյապաղ» իմաստով առձեռն պատրաստ յարադրական կազմութիւնն առկայ է միայն ԶԲ-ում (էջ 202). միւս բառարանները, ինչպէս, օրինակ, ՆՀԲ-ն, թէեւ արձանագրում են «անյապաղ» իմաստով առձեռն-ը (հտ. I, էջ 307), սակայն չեն առանձնացնում առձեռն պատրաստ-ը, իսկ ԱԲ-ում, առձեռն-ի՝ «շուտով, պատրաստ» նշանակութիւններից բացի, վկայում է նոյն իմաստով առձեռնպատրաստ բաղադրեալ կազմութիւնը (ԱԲ, էջ 116)։ Այն յիշատակում է նաեւ Ա. Խուրաբաշեանը՝ "скоро, поспешно" նշանակութեամբ²¹։

Ոչ միայն քննուող գրչագրում (223բ), այլեւ ժԳ դարից աւանդուած ՄՄ թիւ 4612-ում (175բ) Մուրկ. հասկ. խայրիք. բերք. բեղուն. արգասանդ. բեղմ(ն)աբեր ՀԲԾ-ն աւարտում է ծննդական բառով։ Եր. Մեղրե-

20 Հայոց լեզուի մոր բառարան, 1968, էջ 502։ Հայոց լեզուի մոր բառարան. հտ. II, 1992, էջ 87։ Ա. Կոսմեան, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 285։

21 Բառարանի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ. Աշխատասիրութեամբ Աղէքսանդրի Մակարեան Խոտաբաշեանց (այսուհետեւ՝ ԽԲՀՈ), հտ. I. Մոսկով, 1838, էջ 147։

ցին այն բացատրում է «տօն, կամ նաակատիք» (ԲՀ, էջ 152): Մխիթար Սեբաստացին, յղելով Աստուածաշունչը, ծննդակաճը մեկնում է որպես «... անուն ածանցական, որով նշանակի ծնանողն. կամ երկնողն», այլևս դարձնալ յիշատակելով Աստուածաշունչը՝ նշում. «Իսկ մերթ նշանակի այն, որ կարէ ծնանիլ. եւ ոչ է ամուլ. կամ այն՝ որ է յաճախածին. աշխինքն ունի բեղմնաւոր արգանդ, որով յաճախ ծնանի»: Բառայօգուածի վերջում նա յաւելում է. «Իսկ մինչ ասի գումեքէ դու ծննդական մտօք, նշանակէ զնայ, որ յօթ ճոխարար՝ եւ դիւրապէս կարէ յառաջ բերել զիմն ի մտաց. եւ կամ որ է յօթ բեղմնաւոր մտօք. եւ ըստ այսմ ասի զմեծէն Մեսրոպայ», եւ վկայակոչում Մ. Խորենացուն՝ քաղելով «Զի գոյր տեսլեամբ Հրեշտակական, մտօք ծննդական, բանիւ պայծառ» նախադասութիւնը (ԲՀԼ, էջ 416 (449)): Մխիթար Սեբաստացին արձանագրում է նաեւ «բերուկ» նշանակութիւնը (ԲՀԼՄՍ, էջ 186 (799)), որը ՆՀԲ-ն վկայում է «Որպէս Բերրի» (Հտ. I, էջ 485): «Բազմածին, բեղ(մ)նաւոր, պտղաբեր» իմաստներն ունեն ԱԲ-ն (էջ 409), ԶԲ-ն (էջ 729), ՄՀԲԲ-ն՝ «Հին նշանակութիւն» նշումով (Հ. II, էջ 346)²²:

Համոզել. ողորել. ամոքել ՀԲԾ-ում (224ա) առկայ միջնորդել-ը, ՆՀԲ-ի վկայութեամբ, «ի Հին բռ. որպէս փաղանուն դնին,՝Համոզել, ողորել, ամոքել, միջնորդել,» (Հտ. II, էջ 29): Բառգրքում բայի համար առաջնային են համարւում «ի մէջ անկանիլ, ընդ մէջ մտանել՝ առթել. լինել

որպէս միջնորդ, պայման, սատար» նշանակութիւնները, եւ միջնորդել-ը «որպէս Բարխոսել» նշում է «ըստ ոճոյ յետին դարուց»՝ յղելով Ժ. Գ. Գ. Նշանաւոր գործիչ Կ. Գանձակեցուն (Հտ. II, էջ 280)²³: Մխիթար Սեբաստացին նախապէս նշում է միջնորդելի «միջնորդ լինել. կամ բարխոսել. եւ կամ ի մէջ մտանելով համոզել ի խաղաղութիւն» իմաստը՝ յղելով Ժ. Գ. մատենագիր Ն. Համբրոնացուն եւ Ժամագիրք ժողովածուն²⁴ (ԲՀԼ, 665): Իսկ Համոզել բառայօգուածում ներկայացնում է Աստուածաշնչից եւ Մ. Խորենացուց քաղած «միջնորդել. կամ խաղաղացուցիչ լինիլ. կամ քաղցր բանիւ հակեցուցանել ի հաւանումն. կամ յօրդորել. եւ կամ փաղաքշել» նշանակութիւնները (ԲՀԼ, 504): Եր. Մեղրեցին յիշատակում է Համոզել. միջնորդել կամ խաղաղացուցանել բառաշարքը (ԲՀ, էջ 178)²⁵: Ստ. Մալխասեանցը գրաբարի տպագիր բառանների արձանագրած առաջնային իմաստները համարում է «Հին նշանակութիւն» եւ առանց որեւէ նշումի արձանագրում «Իբրեւ միջնորդ միջամտել՝ մի բան աշտեցնելու, հաշտեցնելու նպատակով. բարխոսել»-ը (ՄՀԲԲ, Հտ. III, էջ 337): Հայերէն միւս բառարաններում «բարխոսել, միջնորդութիւն անել» (ԺՀԲԲ, Հտ. III, էջ 541: ԱՀԲԲ, էջ 1015), «հաշտեցնել, բարխոսել, միջամտել» նշանակութիւններն են²⁶:

Ժ. Դարից աւանդուած ՄՄ, թիւ 2371 ձեռագրում (285թ) իմաստուն. զգոյշ. զգաստ. հանդարտ. զուարթ ՀԲԾ-ի յենարաւը Զգաւն-ն է: Եր. Մեղրեցին վկայում է

22 Տե՛ս նաեւ՝ Ս. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերէն լեզուի (այսուհետեւ՝ Գ.ԲՀԼ), Կ.Պոլիս, 1910, էջ 671:

«Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան», հտ. II, 1957, էջ 633: «Հայոց լեզուի նոր բառարան», 1968, էջ 290: «Հայոց լեզուի նոր բառարան», հտ. I, 1992, էջ 916:

23 ԱԲ-ն ունի միայն «մէջ ձգել» բացատրութիւնը (էջ 566):

24 «Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդդէմ աստեղաց, հաստատէ՛ գրազուկս մեր

կարողութեամբ, համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդիլ»

25 <http://greenstone.flib.sci.am/gsdli/collect/armenian/Books/bargirq/book/index.html#page/176/modc/2up>

26 Տե՛ս «Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան», հտ. II, 1957, էջ 1026: «Հայոց լեզուի նոր բառարան», 1968, էջ 546: «Հայոց լեզուի նոր բառարան», հտ. II, 1992, էջ 196: Ա. Կոսմեան, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 303:

«Հանդարտ, կամ հաւան, կամ զգոյշ, կամ զգաստ, կամ ուշիմ» իմաստը (ԲՀ, էջ 101): Մխիթար Սեբաստացին նշում է «իմաստուն. կամ հանճարեղ. կամ խոհեմ. կամ ուշիմ. կամ խելամուտ. կամ զգաստ» (ԲՀԼ, էջ 276), նաեւ «խելօք, խելացի, մեծ զուլս, իմաստուն» իմաստները (ԲՀԼՄՍ, էջ 127 (740)): ՆՀԲ-ն բառը յիշատակում է «ուշիմ, եւ ուշեղ. այսինքն մեղմ, հանդարտ, հեղ. ընդել. ցածուն. հլու, (մարդ, եւ անասուն) է. եւս եւ Հանճարեղ, իմաստուն, ներհուն, բանիբուն» բացատրութեամբ՝ բառայօդուածի վերջում յաւելելով. «Իսկ Զգօն՝ ըստ որում իմաստուն՝ յօյնք եւ լատինք զսուրբն Յակոբ Մծբնացի կոչեն»²⁷ (ՆՀԲ, հտ. I, էջ 729): Հարկ է նկատել, որ Մխիթար Սեբաստացին այս արմատով կազմուած բայերի (զգօնանաւ, զգօնացուցանեմ) եւ ածանցաւոր կազմութիւնների (զգօնութիւն, զգօնարան) համար առաջնային նշում է «իմաստնանալ.... կամ հանճարեղանալ», «իմաստացուցանել. կամ հանճարեղ առնել», «իմաստութիւն. կամ հանճարեղութիւն», «իմաստարան» նշանակութիւնները (ԲՀԼ, էջ 276): ԲՀԼՄՍ, էջ 127, 134)²⁸, մինչ հայերէն բառարանները, թէեւ նշում են զգօն-ի «խելացի, իմաստուն» (ԱԲ, էջ 292), «խելօք, իմաստուն, ծանրազուլս, խոհական» (ԳՆԲՀԼ, էջ 462), «իմաստուն, հանճարեղ» (ԶԲ, էջ 504: ՄՀԲԲ, հտ. II, էջ 20), «իմաստուն, խոհական»²⁹ իմաստները, բայց եւ այդ արմատով կազմուած բաղադրեալ

կազմութիւններում արձանագրուած են նախնական «Հանդարտ, մեղմ, հեղ, ուշիմ, խոհեմ» նշանակութիւնները³⁰: Բառարանների տուեալներով արդէի հայերէնում զգօնը դործածուած է «խոհեմ, խելացի», «արթուն, զգաստ, աշաւուրջ», «հեղաբարոյ, հեղ, հանդարտ», «պարկեշտ» իմաստներով (ԺՀԼԲԲ, հտ. II, էջ 26: ԱՀԲԲ, էջ 370):

Ինչ վերաբերում է նոյն ՀԲԾ-ում յիշատակուող զուարթ-ին, ապա Մխիթար Սեբաստացին Աստուածաշունչ մատենանից վկայում է «եւ մերթ արթուն, կամ զգաստ» նշանակութիւնը (ԲՀԼ, էջ 283): ՆՀԲ-ն, մեկնելով «զգաստ եւ ուրախ» («Այլ դու զուարթ կաց յամենայնի»), դարձեալ յղում է Աստուածաշունչը (հտ. I, էջ 743)³¹: Մ. Զախախեանի կազմած բառարանում զուարթ-ի «զգաստ, արթուն, լուրջ» իմաստներն են (ԶԲ, էջ 514): Այս բառարաններից բացի՝ հայերէն միւս բառարանները վերոնշեալ իմաստները չեն նշում՝ արձանագրելով «ուրախ, աշխոյժ, կայտաւ, եռանդուն, առոյգ, պայծառ» եւ այլ նշանակութիւններ:

Ժէ դարից աւանդուած ՄՄ թիւ 2291 (II)³² ձեռագրում՝ Անպատկառ. անամօթ. անլիր. լիրբ. ՀԲԾ-ում (344բ), առանձնանում է անվեհեր բառը: Մխիթար Սեբաստացին, «անդանդաղ. կամ անդեղեր. կամ անյապաղ. կամ անձանձրոյթ», «իսկ մերթ՝ անկասկած. կամ անտարակոյս. կամ աներկբայ» նշանակութիւններից բացի, վկայում է, իր գիտարկմամբ, «ի հին քեր.» առկայ

27 Յակոբ Մծբնացու եւ «Զգօն» խորագրով երկասիրութեան հեղինակի մասին տե՛ս Ե. Տէր-Մինասեան, «Զգօն» կոչուած գրքի հեղինակի հարցը, Պատմա-բանասիրական հանդէս, I, 1964, էջ 257-264:

28 Թերեւս համեմատելի է նաեւ Հ. Աճառեանի թէականօրէն նշած զգալ-ի «շատ լիրբ լինել» իմաստը Նիկոմեդայի բարբառի Չեմկիլերի խօսուածքում (ՀԱԲ, հ. Բ, էջ 87):

29 Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. II, 1957, էջ 296:

30 Տե՛ս նոյն տեղերում, նաեւ՝ «Հայոց լեզուի նոր բառարան», 1968, էջ 150: «Հայոց լեզուի նոր բառարան», հտ. I, 1992, էջ 610: Ա. Կոսեան, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 122:

31 Տե՛ս նաեւ «Համաբարբառ գրաբար Աստուածաշունչի», Էջմիածին, 2012, էջ 700:

32 ՄՄ թիւ 2291 ձեռագրում առկայ է երկու բառարան՝ «Հանդէս բանաստեղծաց փաղանոմաբար ստորոգիլ նորավարժից սակս» (էջ 316ա-325այ) եւ «Այս բառք գեղջուկը որ կարի պիտոյ է վարժասիրաց. ներխոնեմից» խորագրերով (էջ 344ա-347այ): Առաջին բառարանը նշում է համապատասխանաբար ՄՄ, թիւ 2291(I), իսկ երկրորդը՝ ՄՄ, թիւ 2291 (II):

«երբեմն եւս անամօթ, կամ անպատկառ, կամ լկտի, կամ լիրբ» իմաստները՝ նշելով՝ «ըստ այսմ է եւ ի վարս հարց. ժդ. ուր ասի. Սուտ յայտնեցաւ անվեհեր, եւ լրբենի աղքատս» (ԲՀԼՍՄ, 46 (71)): ՆՀԲ-ն նոյնպէս այս նշանակութեան համար յղում է «Վարք սրբոց հարանց» ժողովածուն (Հտ. I, էջ 240)), որի առաջին խմբագրութիւնը «... XII դարի վերջում նախածեռնել է Հայ մատենագրութեան նշանաւոր ներկայացուցիչներից մէկը Ն. Լամբրոնացին, ի մի բերելով ժողովածուի զանազան մասերի հնագոյն թարգմանութիւնները»³³: Անվեհեր-ի «անամօթ, լիրբ, անպատկառ» իմաստներն է յիշատակում նաեւ Մ. Զախ-ջախեանը (ՋԲ, էջ 155): Հետաքրքրական է, որ Ա. Խուղարաշեանը անվեհեր-ը ռուսերէն բացատրում է նաեւ "назлѣнъ" (ԽԲՀԹ, Հտ. I, էջ 111):

Հայերէն բառարաններն արձանագրում են «անվախ, աներկիւղ, սրտոտ, խիզախ, արխասիրտ, համարձակ. ժիր» իմաստները (ՄՀԲԲ, Հտ. I, էջ 178: ԱՀԲԲ, էջ 80: ԺՀԼԲԲ, Հտ. I, էջ 136)³⁴, Ա. Կռանեանն ունի նաեւ «յանդուզն» բացատրութիւնը³⁵: Եւ այս առիթով կարելի է նկատել, որ անշուշտ ընդունելի է անվախ, աներկիւղ, արխասիրտ, խիզախ անհատի՝ յանդուզն, անդուսպ, անխոհեմ լինելը, բայց եւ ճիշտ չէր լինի անվերապահօրէն պնդել, որ այդպիսի անձնավորութիւնն անամօթ, անպատկառ է: Այդուհանդերձ փաստ է, որ անվեհեր-ն

այդ իմաստով առկայ է մատենագրութեան մէջ:

Նոյն գրչագրում՝ Չարաբարոյ. Անգա-ծետ. Խորամանգ. Բնարաւոր. անմեկին՝ ՀԲԾ-ում (346ր), վկայուող կրկնակ բառը՝ «կեղծաւոր, երկու երես» նշանակութեամբ, ՆՀԲ-ն արձանագրում է Եփրեմ Ասորու «չորից աւետարանաց» մեկնութեան հայերէն թարգմանութեան մէջ՝ «Ո՛վ ընդ մարդկան կրկնակին» (Հտ. I, էջ 113): Բառը կարելի է թարգմանչի հեղինակային նորակագմութիւն կամ դիպուածային համարել, քանի որ գրաբարի տպագիր (ԱԲ, էջ 454)³⁶ եւ Ստ. Մալխասեանցի կազմած բառարաններից բացի՝ հնարաւորութիւն չի ընձեռուել որեւէ այլ վկայութեամբ հաստատելու բառի գոյութիւնը³⁷:

Իսկ ահա Լուտալ. պարսաւել. բամբասել. բարքողել. այպանել. քամահել. անարգել. արհամարհել. դարովել. աւաղել. հիքել. քիքել. անխատել. ձաղել. ձառակոծել. խոտել. աղտեղել. անիծանել. եպերել. անգոսնել, պախարակել. զայրացուցանել. ափսոսել ՀԲԾ-ում (345ր) յաւելուած երգիծուցանել բայը Եր. Մեղրեցին բացատրում է որպէս «յափշտակեցուցանել, կամ կսկծեցուցանել, կամ խռովեցուցանել, կամ ափսոսալ» (ԲՀ, էջ 92): Միւթար Սեբաստացին երգիծուցանել-ը յղում է երգիծանել-ին՝ բացատրելով որպէս «մեղադրել ... դարձեալ սիրտ կսկծցնել կամ երել» (ԲՀԼՄՍ, էջ 116-117 (729-730)),

33 Լ. Զ. Տեր-Պետրոսեան, Louis Leloir, *Paterica armeniaca a P. P. Mechitaristis edita (1855) nunc latine reddita*, „Corpus Scriptorum Christianorum Orientalium“, t. I (Vol. 353 Subs. 42), 1974; t. II (Vol. 361 Subs. 43), 1975; t. III (Vol. 371 Subs. 47), 1976; t. IV (Vol. 379 Subs. 51), 1976, Louvain. Լուի Լըլուար, Հայոց «Վարք Հարանցի» յատկենթեմ թարգմանութիւնը ըստ Միսիթարեան Հայերի 1855թ. հրատարակութեան, հատ. 1-4, Լոււեմ, 1974-1976,- Պատմա-բանասիրական հանդէս, 1, 1979, էջ 255:

34 Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. II, 1957, էջ 444: Հայոց լեզուի մոր

բառարան, 1968, էջ 202: Հայոց լեզուի մոր բառարան, հտ. I, 1992, էջ 730:

35 Ա. Կռանեան, Բառգիրք գործնական հայերէնի, էջ 31:

36 «Փխբ.» իմաստով եւ մշում «Գրաբարի բառարան»-ը (Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետեւ՝ ԳԲ), հտ. Ա. Եր., 2000, էջ 680) եւ «Գրաբարի հոմանիշների բառարան»-ը (Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան (այսուհետեւ՝ ԳՀԲ), Անթիլիաս, 2006, էջ 394):

37 Ստ. Մալխասեանցը կրկնակ-ի «երկերեսանի, երկդիմի, կեղծաւոր» իմաստը մշում է «հազուադէպ» մշանակութեամբ եւ «մանկութեամբ». տե՛ս ՄՀԲԲ, հտ. II, էջ 506:

խսկ Քամահրել բառայօդուածում յիշատակում ոչ միայն երգիծանել-ն ու երգիծուցանել-ը, այլևս համարեա բոլոր այն բայերը (ԲՀԼՄՍ, էջ 669 (1698)), որոնք վկայում են այս գրչագրում: ՆՀԲ-ն, երգիծուցանեմ բառայօդուածում յիշատակելով երգիծանել-ը, *և. Անձեւացու, Գրիգոր Նարեկացու, Ն. Լամբրոնացու երկերից քաղուող բնագրային օրինակներում նշում է «Իբր Կծանել. զկծեցուցանել. կշտամբել. եպերել»* իմաստները (Հտ. I, էջ 673): Հ. Աճառեանը երգիծանել-ի համար նույնպէս նոյն երկերից արձանագրում է «կծել, նախատել, ծաղրել» իմաստները, իսկ «երգիծանք, երգիծարան, երգիծական, երգիծարանական, երգիծարանութիւն» «նոր բառեր»-ի համար նշում ««զաւեշտ» իմաստը, որ հնում չկայ» (ՀԱԲ, Հտ. Ա, էջ 43): Մ. Զախչախեանը երգիծանել-ը բացատրում է «եպերել, կշտամբել» (ԶԲ, էջ 459), Ստ. Մալխասեանցը՝ «փոխ.» նշանակութեամբ «յանդիմանել, պախարակել» (ՄՀԲԲ, Հտ. I, էջ 575):

Բառարանային դիտարկումները հնարաւորութիւն են ընձեռում առանձնացնելու նաեւ արդի Հայերէնում իմաստափոխուած կամ իմաստային փոքր-ինչ այլ երանգով վկայուող բառերը. այսպէս՝ Իրաւարար բառն առկայ է Տէր. դատար. քննադ. ՀԲԾ-ում (ՄՄ, ձեռ. 5596, 218ա. ՄՄ, ձեռ. 4149, 362բ)³⁸: Աստուածաշնչում իրաւարար-ը վկայում է մէկ անգամ՝ «Եղիցի Տէր դատաւոր եւ իրաւարար ընդ իս եւ ընդ քեզ»³⁹: Մխիթար Սեբաստացին բառը մեկնում է՝ «Իրաւարար զիրաւունս, կամ զարդարութիւն կամ զգատատան առնօղ,

կամ իրաւացուցանօղ: կամ դատաւոր. եւ կամ դատ առնօղ» (ԲՀԼ, էջ 344 (377), «.... Հախ ընօղ դատօղ» (ԲՀԼՄՍ, էջ 157 (770)): Գ. Պալատցին իրաւարար բառը յիշատակում է պարսկերէն Տատ («Արդարութիւն.... Ուստի եւ արդար եւ իրաւարար թագաւորն կոչուի Տատկէր, որ ըստ այսմ Հայերէն եւս ասի դատ, որ է իրաւունք»), Տատար («է անուն մի յանուանցն աստուծոյ. եւ նշանակէ արդար եւ իրաւարար»), Տատկիւթէր («Իրաւարար կամ արդարագործ») բառայօդուածների բացատրութիւններում⁴⁰: Նոր Հայկազեան բառգիրքն այն բացատրում է «Որ առնէ իրաւունս դատարանաւ. արդար գատաւոր» (ՆՀԲ, Հտ. I, էջ 872)⁴¹, Առնուն բառարանում «գատաւոր. իրաւունք ընօղ» նշանակութիւնն է (ԱԲ, էջ 348): Մ. Զախչախեանը «որ առնէ իրաւունս եւ արդարութիւն. արդարագատ» իմաստներին աստղանիշով (այսինքն՝ իբրեւ «նոր բառ») յաւելում է «միջնորդ գատաւոր ընտրեալ երկուց կողմանց գծելոյց յորոշել զդատ նոցայ ըստ կանոնի խոհեմութեան» նշանակութիւնը (ԶԲ, էջ 617)⁴², Ա. Խուդաբաշեանցը նշում է՝ "оказывающую справедливостъ" (ԽԲՀՌ, Հտ. I, էջ 465 (տե՛ս նաեւ էջ 25)), Գր. Փէշարմալճեանը արձանագրու է՝ «....իբրեւ գոյական՝ նշանակէ արդար դատաւոր....»⁴³: ԳՀԲ-ում իրաւարար-ի հոմանիշ է «Իրաւընտիր (արդար գատատան անօղ)»-ը (էջ 308)⁴⁴: Հ. Աճառեանի Հաւաստմամբ՝ «Իրաւ իբր ուղ. գոյական ըմբռնուելուց յետոյ՝ տուել է նորանոր ածանցներ.... իրաւունք, իրաւարար. իրաւացի » (ՀԱԲ, Հտ. Բ,

38 ԺԸ դարից աւանդուած ՄՄ, ձեռ. 566 (II)-ում յաւելուել է դատող բառը (297ա):

39 Համաբարբառ գրաբար Աստուածաշնչի, էջ 815:

40 Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գեորգեայ դպրէ Տէր Յոհաննէսեան Պալատցոյ, Կ. Պոլիս, 1826, էջ 537 (601):

41 ՆՀԲ-ում իրաւարար բառը յիշատակում է Աճ. զոկող, Արդար, Դատարար, Իրաւաքեր, Իրաւախոհ, Կշտարար բառայօդուածներում (Ռտ. I, էջք 146, 346, 601, 871, 872):

42 Մ. Զախչախեանը Ուղղագործ բառայօդուածում նույնպէս յիշատակում է իրաւարար եւ արդար բառերը (ԶԲ էջ 1140):

43 Բառգիրք Հայկազեան լեզուի որ է երկասիրութիւն Փէշարմալճեան պատուելի Գրիգոր մեծ-իմաստ վարժապետի», Խտ. I, Կ.Պոլիս, 1844, էջ 508:

44 Նոյն հեղինակի կազմած «Գրաբարի բառարան»-ում արձանագրում է նաեւ «միջնորդ դատարար» իմաստը. տե՛ս ԳԲ, Ռտ. Ա, էջ 524:

էջ 250)⁴⁵: «Միջին Հայերէնի բառարան»-ը նշում է իրաւաբեր բառը «իրաւունք եւ արդարութիւն բերող՝ անող, իրաւարար»⁴⁶:

Ստ. Մալխասեանցը, իրաւարար «Հին բառ»-ը բացատրելով «իրաւունք եւ արդարութիւն անող, արդար դատաստան անող», «միջնորդ դատաւոր»-ը նշում է իբրեւ «Հագուադէպ նշանակութիւն»՝ յղելով՝ (Տ. Դատաւոր) (ՄՀԲԲ, Հտ. II, էջ 174): Արդի Հայերէնի բացատրական բառարանները իրաւարար (այսինքն՝ արդար դատաւոր) են համարում միայն միջնորդ (արբիտր) եւ հաշտարար դատաւորներին՝ «արդարադատ»-ը նշելով «Հնց.», «Հին»՝ ի հակադրութիւն գրաբարում արձանագրուած ընդհանրապէս արդար եւ անարդար դատաւորների (ԺՀԼԲԲ, Հտ. II, էջ 361: ԱՀԲԲ, էջ 508)⁴⁷: Փաստօրէն այժմ (ըստ բացատրական բառարանների) իրաւարար-արդարադատ են համարում միայն հաշտարար եւ միջնորդ դատաւորները: Ուրեմն արդի Հայերէնում կարելի է իմաստի նեղացումով արձանագրել իմաստային տարբերակում:

Եզրակացութիւն

«Հանդէս բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարաններում վկայուող բառիմաստների սոյն քննութիւնը Հիմք է տալիս ամրագրելու, որ՝

▪ բառարանագիրները քաջածանօթ են եղել Հայ ինքնուրոյն եւ թարգմանական գրականութեանը,

▪ բառաշարքերում այդպիսի բառեր են ներառուել ուսուցողական նպատակներով. հաւանական է, որ այդ բառիմաստները գործածել են ժամանակակիցները.

▪ առանձնացուած բառերն առկայ են գրաբարի՝ Ժէ. դարից յետոյ հրատարակուած եւ բնագրային օրինակներով համալրուած բառարաններում՝ մեծաւ մասամբ ձեռագիր բառարաններում վկայուած բառիմաստներով.

▪ բառարանների տուեալներով այդ բառիմաստները արդի Հայերէնում փոփոխուել են կամ չեն պահպանուել:

Օգտագործուած գրականութիւն

Աբեղեան Մ., Երկեր, Զ, Հայոց լեզուի տեսութիւն, Երևան, 1974:

Ամալեան Հ., Միջնագարեան Հայաստանի բառարանագրական յուշարձանները (V-XV դդ.), Երևան, 1966:

Ամալեան Հ., Հայ միջնագարյան բառարանագրութիւնը, Երևան, 2007:

Գասպարեան Գ., Հայ բառարանագրութեան պատմութիւն, Երևան, 1968:

Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան և այլ երկասիրութիւնք, Անթիլիաս, 2003:

Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Աշխատ.՝ Պ.Մ.Նաշատրեանի և Ա.Ա. Ղազինեանի, Երևան, 1985:

Մանանդեան Յ., Հերմէյ Եռամեծի առ Ասիղեպիոս սահմանք, Բանբեր Մատենադարանի, 3, 1956:

Մուրադեան Գ., Յունարանութիւնները դասական հայերէնում, Երևան, 2010:

Տէր-Մինասեան Ե., «Զգօն» կոչուած գրքի հեղինակի հարցը, Պատմա-բանասիրական հանդէս, 1, 1964:

Տէր-Պետրոսեան Լ. Յ., *Louis Leloir, Paterica armeniaca a P. P. Mechitaristis edita (1855) nunc latine reddita*, „Corpus Scriptorum Christianorum Orientalium“, t.

45 Հմմտ. Ասեւ՝ *Իրաւարար եւ Իրաւաւեր* բառայօդուածները «Հայոց լեզուի հոմանիշների բառարան»-ում. տե՛ս՝ Ա. Սուքիասեան, *Հայոց լեզուի հոմանիշների բառարան*, Եր., 1967, էջ 238:

46 Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, *Միջին հայերէնի բառարան*, Եր., 2009, էջ 294:

47 Տե՛ս Ասեւ՝ ՄՀԲԲ, հտ. II, էջ 174: «Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան», հտ. II, էջ 461: «Հայոց լեզուի մոր բառարան», 1968, էջ 209: «Հայոց լեզուի մոր բառարան», հտ. I, 1992, էջ 747: Ա. Կոսմեանը յիշատակում է միայն՝ «դատաւոր (խաղի)» (Ա. Կոսմեան. *Բառգիրք գործնական հայերէնի*, էջ 154):

I (Vol. 353 Subs. 42), 1974; t. II (Vol. 361 Subs. 43), 1975; t. III (Vol. 371 Subs. 47), 1976; t. IV (Vol. 379 Subs. 51), 1976, Louvain. Լուի Լըլուար, Հայոց «Վարք Հարանցի» լատիներէն թարգմանութիւնն ըստ Սիսիթարեան Հայրերի 1855թ. հրատարակութեան, հատ. 1-4, Լուվեն, 1974-1976, - Պատմա-բանասիրական հանգէս, 1, 1979:

Բառարաններ

Աղալեան Է., Արդի հայերէնի բացատրական բառարան, Երևան, 1976:

Աճառեան Հ., Հայերէն արժատական բառարան, հտ. Ա., Բ., Գ., Երևան, 1971, 1973, 1977:

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1865:

Աղէքսանդր Մակարեան Սուղաքաշեանց Բառարանի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, հտ. I, II Մոսկով, 1838:

Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից ի Գէորգեայ Դպրէ Տէր Յոհաննէսեան Պաշտոնոյ, Կ. Պոլիս, 1826:

Հ. Մանուէլ վարդապետ Զախչախեան, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, 1837:

Բառգիրք հայկազնեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս արարեալ ի Միսիթարայ վարդապետէ սեբաստացոյ, Վենետիկ, 1749:

Գրիգոր Փեշտըմալճեան, Բառգիրք Հայկազնեան լեզուի, հտ. I, Կ. Պոլիս, 1844:

Բառգիրք հայկազնեան լեզուի, հտ. II, Արարեալ բաղձատքուն, և աշխուրջ ճգանօք՝ յաշակերտաց ամենապատիւ տեառն Միսիթարայ մեծի աբբայի, և ըստ ընտանայեան Սեբաստացոյ, Վենետիկ, 1769:

Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանօթագրութիւնները Հ. Մ. Ամալեանի, Երևան, 1975:

Գաբամաճեան Ա., Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, 1910:

Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան, հտ. I-III, Ե., 1969, 1972, 1974:

Կոռնեան Ա., Բառգիրք գործնական հայերէնի, Պէյրուք, 1998:

Պետրոս վարդ. Ծիգմէճեան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հտ. I- II, Հայէպ, 1954-1957:

Ա. Տէր Խաչատուրեան, Հ. Գանգրումի, Փ. Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուք, 1968:

Գ. Ծէրէճեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, հտ. I, Պէյրուք, 1992:

Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, հտ. Ա., Երևան, 2000:

Ղազարեան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս, 2006:

Ղազարեան Ռ., Ավետիսեան Հ., Միջին հայերէնի բառարան, Երևան, 2009:

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հտ. I, II, III, Երևան, 1944:

Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, Երկասիրութիւն երկից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատուրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Ազգերեան, հտ. I- II, 1836-1837:

Սուքիասեան Ա., Հայոց լեզուի հոմանիշների բառարան, Երևան, 1967:

Համաբարբառ

Համաբարբառ գրաբար Աստուածաշնչի, էջմիածին, 2012:

Մաշտոցի անուան Մատենադարանի

ձեռագրերի ցուցակներ և ձեռագրեր

Յուզակ ձեռագրաց Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա-Բ, Երևան, 1965-1970:

NAZIK HOVHANNISYAN

About Word Meanings Attested in Handwritten Dictionaries Entitled "Handes Banasteghtsats" (XII-XVII Centuries).

SUMMARY

A number of dictionary entries in the dictionary of the ancient Armenian language contain or end with notes on ancient dictionaries, confirming that the members of Mekhitarist Congregation knew about the existence of handwritten dictionaries of synonyms, which, according to the catalogs of manuscripts of the Matenadaran named after Mesrop Mashtots, are dated to the 12th-17th centuries. It is noteworthy that the note "ancient dictionaries" used by the compilers of the dictionary of the ancient Armenian language refer to short handwritten dictionaries created, according to their testimony, by "scholars and ignoramus" in the 13th-14th centuries.

Indeed, in these handwritten dictionaries there are words, the presence of which in a given synonymous row from a modern point of view is confusing: it is quite difficult to distinguish the connotations of synonymous words, since there are no textual examples in the handwritten dictionaries of synonyms. Nevertheless, dictionary observations and searches make it possible to clarify and prove the presence of these words in a given synonymous rows, but also to identify semantic changes. It should be noted that in these cases, dictionaries of the ancient Armenian

=

language with original examples and references are especially helpful.

The article examines the semantic changes of the words imastak ("sage"→"ignorant"), manramasn ("minute"→"in detail"), ardzern patrast ("soon, hastily"→Ø), tsndakan ("fertile, fruitful"→"birth certificate") mijnordel ("to persuade"→"to mediate"), zgon ("wise"→"vigilant"), zuart ("vigilant, sober"→"cheerful"), anveher ("shameless, impudent"→"brave, fearless"), krknak ("angry"→Ø), yergitsutsanel ("to reproach"→"to ridicule"), iravarar ("fair"→"magistrate").

Considering the meanings of words attested in handwritten dictionaries, it can be stated that the compilers of the dictionary were well acquainted with Armenian independent and translated literature and included such words in the dictionary for educational purposes; it is also likely that these meanings were used by contemporaries. It should also be noted that these word meanings are present in dictionaries published after the 17th century, supplemented by original examples, mainly with word meanings attested in handwritten dictionaries, and that in the dictionaries of the modern Armenian language they have been changed or not preserved.